

## Տ. ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
### *(ավազանի անունը՝ Հայկ)*

Ծնվել է 1970 թ. դեկտեմբերի 9-ին, Էջմիածին քաղաքում:

1977–1988 թվականներին սովորել և ավարտել է Էջմիածնի թիվ 2 միջնակարգ դպրոցը, ապա ընդունվել Երևանի մեքենաշինական տեխնիկումի ավտոմանապարհային մեքենաներ և սարքավորումներ բաժինը: Մեկ տարի սովորելուց հետո, ծառայել է խորհրդային բանակում:

Ծառայությունից հետո, 1991-ից շարունակում է ուսումը և ավարտում այն:

1994 թվականից ծառայել է Ս. Հռիփսիմե վանքում որպես դպիր և կատարել լուսարարի պարտականությունները:

1997-ին Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոսի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հոկտեմբերի 26-ին, Գյուտ Խաչի տոնին, Տաթևի վանքում, ձեռամբ թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպսկ. Մկրտչյանի, օծվել է քահանա և ծառայության նշանակվել Կապան քաղաքում: